

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՍԻՆԳԱՊՈՒՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ,
ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ՈՒ ՇՐՋԱՆՑԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը եւ Սինգապուրի Հանրապետության կառավարությունը,

ցանկանալով առավել զարգացնել իրենց տնտեսական հարաբերությունները եւ ընդլայնել իրենց համագործակցությունը հարկային հարցերում,

նպատակ ունենալով բացառել սույն համաձայնագրով նախատեսված կրկնակի հարկումը՝ առանց հնարավորություններ ստեղծելու հարկերից խուսափելու կամ դրանք շրջանցելու միջոցով հարկման բացառման կամ նվազեցված հարկման համար (այդ թվում՝ պայմանագրի առավելություններից օգտվելուն ուղղված պայմանավորվածությունների միջոցով, որոնք ուղղված են սույն համաձայնագրով նախատեսված՝ երրորդ երկրների ռեզիդենտների՝ անուղղակի արտոնության մասով հարկերից ազատմանը),

համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

Անձինք, որոնց նկատմամբ կիրառվում է համաձայնագիրը

Սույն համաձայնագիրը կիրառվում է Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտներ հանդիսացող անձանց նկատմամբ:

Հոդված 2

Հարկերը, որոնց վրա տարածվում է համաձայնագիրը

1. Սույն համաձայնագիրը կիրառվում է Պայմանավորվող պետության կամ նրա վարչատարածքային ստորաբաժանումների կամ իշխանության տեղական մարմինների կողմից սահմանված՝ եկամուտներից գանձվող հարկերի նկատմամբ՝ անկախ դրանց գանձման եղանակից:

2. Եկամուտներից գանձվող հարկեր են համարվում եկամուտների ընդհանուր գումարի կամ դրանց տարրերի նկատմամբ սահմանված բոլոր տեսակի հարկերը, ներառյալ՝ շարժական կամ անշարժ գույքի օտարումից ստացվող եկամուտները, ինչպես նաև գույքի արժեքի հավելաճի նկատմամբ սահմանված հարկերը:

3. Համաձայնագիրը մասնավորապես կիրառվում է գոյություն ունեցող հետևյալ հարկերի նկատմամբ.

ա) Սինգապուրում՝

- եկամտահարկ

(այսուհետ՝ սինգապուրյան հարկ),

բ) Հայաստանում՝

i) շահութահարկ, եւ

ii) եկամտային հարկ,

(այսուհետ՝ հայկական հարկ):

4. Համաձայնագիրը կիրառվում է նաև նմանատիպ կամ էապես համանման ցանկացած հարկի նկատմամբ, որը կսահմանվի Համաձայնագրի ստորագրման օրվանից հետո՝ ի լրումն գործող հարկերի, կամ դրանց փոխարեն: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները ծանուցում են միմյանց իրենց հարկային օրենքներում կատարված ցանկացած էական փոփոխության մասին:

Հոդված 3

Ընդհանուր սահմանումները

1. Սույն համաձայնագրի նպատակներով, եթե այլ բան չի բխում համատեքստից՝

ա) «Սինգապուր» եզրույթը նշանակում է Սինգապուրի Հանրապետությունը եւ աշխարհագրական իմաստով օգտագործվելու դեպքում ներառում է դրա հողային տարածքը, ներքին ջրերը եւ տարածքային ծովը, ինչպես նաեւ տարածքային ծովի սահմաններից դուրս գտնվող ցանկացած ծովային տարածք, որը, իր ազգային օրենսդրության եւ միջազգային իրավունքի համաձայն, սահմանվել է կամ հետագայում կարող է սահմանվել որպես տարածք, որտեղ Սինգապուրը կարող է ինքնիշխան իրավունքներ կամ իրավազրոյթություն իրականացնել ծովի, ծովային հատակի, ընդերքի եւ բնական ռեսուրսների նկատմամբ.

բ) «Հայաստան» եզրույթը նշանակում է Հայաստանի Հանրապետությունը եւ աշխարհագրական իմաստով օգտագործվելու դեպքում նշանակում է այն տարածքը, այդ թվում՝ հողը, ջրերը, ընդերքը եւ օդային տարածքը, որոնց նկատմամբ Հայաստանի Հանրապետությունն իր ինքնիշխան իրավունքներն ու իրավազրոյթությունն է իրականացնում՝ իր ազգային օրենսդրության համաձայն եւ միջազգային իրավունքի նորմերին համապատասխան.

գ) «Պայմանավորվող պետություն» եւ «մյուս Պայմանավորվող պետություն» եզրույթները, համատեքստից կախված, նշանակում են Հայաստան կամ Սինգապուր.

դ) «անձ» եզրույթը ներառում է ֆիզիկական անձ, ընկերություն եւ անձանց ցանկացած այլ միավորում.

ե) «ընկերություն» եզրույթը նշանակում է ցանկացած կորպորատիվ միավորում կամ ցանկացած կազմավորում, որը հարկման նպատակներով դիտարկվում է որպես կորպորատիվ միավորում.

զ) «ձեռնարկություն» եզրույթը կիրառվում է ցանկացած ձեռնարկատիրական գործունեության իրականացման նկատմամբ.

է) «Պայմանավորվող պետության ձեռնարկություն» եւ «մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկություն» եզրույթները նշանակում են համապատասխանաբար Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն եւ մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն.

ը) «միջազգային փոխադրում» եզրույթը նշանակում է ցանկացած փոխադրում

նավով կամ օդանավով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ նավը կամ օդանավը շահագործվում է բացառապես Պայմանավորվող պետությունում գտնվող վայրերի միջև, եւ այդ նավը կամ օդանավը շահագործող ձեռնարկությունն այդ պետության ձեռնարկությունը չէ.

թ) «իրավասու մարմին» եզրույթը նշանակում է՝

i) Սինգապուրում՝ Ֆինանսների նախարարը կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչը.

ii) Հայաստանում՝ Ֆինանսների նախարարը եւ Պետական եկամուտների կոմիտեի նախագահը կամ նրանց կողմից լիազորված ներկայացուցիչները.

ժ) «քաղաքացի» եզրույթը Պայմանավորվող պետության առումով նշանակում է՝

i) այդ Պայմանավորվող պետության ազգություն կամ քաղաքացիություն ունեցող ցանկացած ֆիզիկական անձ. եւ

ii) այդ Պայմանավորվող պետության գործող օրենսդրության հիման վրա որպես այդպիսին կարգավիճակ ստացած ցանկացած իրավաբանական անձ, գործընկերություն կամ ասոցիացիա.

ժա) «ձեռնարկատիրական գործունեություն» եզրույթը ներառում է մասնագիտական ծառայությունների եւ անկախ բնույթի այլ գործունեության իրականացումը.

ժբ) «օրենքով սահմանված մարմին» եզրույթը նշանակում է Պայմանավորվող պետության որեւէ օրենքով կազմավորված մարմին, որն իրականացնում է գործառույթներ, որոնք հակառակ դեպքում կիրականացվեին Պայմանավորվող պետության կառավարության կողմից:

2. Պայմանավորվող պետության կողմից համաձայնագիրը ցանկացած պահի կիրառելիս դրանում չսահմանված ցանկացած եզրույթ, եթե համատեքստն այլ բան չի պահանջում, ունի այն նշանակությունը, որն այն ունի այդ պահին, այդ պետության օրենքի համաձայն, այն հարկերի առնչությամբ, որոնց նկատմամբ համաձայնագիրը կիրառվում է. ընդ որում, այդ պետության կիրառելի հարկային օրենքներով սահմանված յուրաքանչյուր նշանակություն գերակայում է այդ պետության այլ օրենքներով այդ եզրույթին տրվող նշանակության նկատմամբ:

Հոդված 4

Ռեզիդենտ

1. Սույն համաձայնագրի նպատակներով «Պայմանավորվող պետության ռեզիդենտ» եզրույթը նշանակում է ցանկացած անձ, որն այդ պետության օրենսդրությամբ այնտեղ ենթակա է հարկման իր բնակության, ռեզիդենտության, ստեղծման վայրի, ղեկավարման վայրի կամ ցանկացած այլ համանման չափանիշի հիման վրա, եւ ներառում է նաեւ այդ պետությունը եւ դրա ցանկացած վարչատարածքային ստորաբաժանում, իշխանության տեղական մարմին կամ օրենքով սահմանված մարմին:

2. Այն դեպքում, երբ, ֆիզիկական անձը, 1-ին կետի դրույթներին համապատասխան, երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ է, նրա կարգավիճակը որոշվում է հետեւյալ կերպ.

ա) նա համարվում է միայն այն պետության ռեզիդենտ, որտեղ ունի իրեն պատկանող մշտական կացարան. եթե նա երկու պետություններում էլ ունի իրեն պատկանող մշտական կացարան, ապա համարվում է միայն այն պետության ռեզիդենտ, որի հետ նրա անձնական եւ տնտեսական կապերն առավել սերտ են (կենսական շահերի կենտրոն).

բ) եթե հնարավոր չէ որոշել այն պետությունը, որտեղ գտնվում է նրա կենսական շահերի կենտրոնը, կամ եթե նա պետություններից ոչ մեկում չունի իրեն պատկանող մշտական կացարան, ապա համարվում է միայն այն պետության ռեզիդենտ, որտեղ սովորաբար բնակվում է.

գ) եթե նա սովորաբար երկու պետություններում էլ բնակվում է կամ չի բնակվում դրանցից եւ ոչ մեկում, ապա համարվում է միայն այն պետության ռեզիդենտ, որի քաղաքացին է.

դ) ցանկացած այլ դեպքում Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները հարցը լուծում են փոխադարձ համաձայնությամբ:

3. Այն դեպքում, երբ, ֆիզիկական անձ չհանդիսացող անձը, սույն հոդվածի 1-ին կետի դրույթներին համապատասխան, երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ է, նա համարվում է միայն այն պետության ռեզիդենտ, որտեղ գտնվում է նրա փաստացի կառավարման մարմինը: Եթե հնարավոր չէ որոշել նրա փաստացի կառավարման մարմինը, ապա Պայմանավորվող պետությունների իրավասու

մարմինները հարցը լուծում են փոխադարձ համաձայնությամբ:

Հոդված 5

Մշտական հաստատությունը

1. Սույն համաձայնագրի նպատակներով «մշտական հաստատություն» եզրույթը նշանակում է ձեռնարկատիրական գործունեության մշտական վայր, որի միջոցով ամբողջությամբ կամ մասամբ իրականացվում է ձեռնարկության ձեռնարկատիրական գործունեությունը:

2. «Մշտական հաստատություն» եզրույթը մասնավորապես ներառում է հետևյալը՝

- ա) կառավարման վայր,
- բ) մասնաճյուղ,
- գ) գրասենյակ,
- դ) գործարան,
- ե) արհեստանոց, եւ

զ) հանքահոր, նավթի կամ գազի հորատանցք, քարհանք կամ բնական պաշարների հետազոտման կամ արդյունահանման ցանկացած այլ վայր:

3. Շինարարական հրապարակը, կառուցման, հավաքման կամ տեղակայման ծրագիրը կամ դրանց հետ կապված վերահսկողական գործունեությունը համարվում են մշտական հաստատություն միայն այն դեպքում, երբ այդ հրապարակի, ծրագրի կամ գործունեության տեւողությունն ինն ամսից ավելի է:

4. Ծառայությունների, այդ թվում՝ խորհրդատվական ծառայությունների մատուցումն անմիջականորեն Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից կամ այդ նպատակով ձեռնարկության կողմից վարձված աշխատողների կամ այլ անձնակազմի միջոցով համարվում է մշտական հաստատություն միայն այն դեպքում, երբ այդ բնույթի գործունեությունը մյուս Պայմանավորվող պետության տարածքում (միեւնույն կամ դրա հետ կապված ծրագրի համար) ցանկացած տասներկուամսյա ժամանակահատվածում շարունակվում է 183 օրը գերազանցող ժամկետով կամ ժամկետներով:

5. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ համարվում է, որ «մշտական

հաստատություն» եզրույթը չի ներառում՝

ա) հարմարությունների օգտագործումը՝ ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի բացառապես պահեստավորման, ցուցադրման կամ մատակարարման նպատակով.

բ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահպանումը՝ բացառապես պահեստավորման, ցուցադրման կամ մատակարարման նպատակով.

գ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահպանումը՝ բացառապես այլ ձեռնարկության կողմից վերամշակման նպատակով.

դ) ձեռնարկության համար գործունեության մշտական վայրի պահպանումը՝ բացառապես ապրանքների կամ արտադրանքի գնման կամ տեղեկությունների հավաքման նպատակով.

ե) գործունեության մշտական վայրի պահպանումը՝ բացառապես ձեռնարկության համար «ա»-«դ» ենթակետերում չթվարկված ցանկացած գործունեություն իրականացնելու նպատակով՝ պայմանով, որ այդ գործունեությունը կրում է նախապատրաստական կամ օժանդակ բնույթ, կամ

զ) գործունեության մշտական վայրի պահպանումը բացառապես «ա»-«ե» ենթակետերում նշված գործունեության տեսակների ցանկացած համակցության համար՝ պայմանով, որ գործունեության մշտական վայրի ընդհանուր գործունեությունն այդ համակցության արդյունքում շարունակում է կրել նախապատրաստական կամ օժանդակ բնույթ:

6. Չնայած 1-ին եւ 2-րդ կետերի դրույթներին՝ այն դեպքում, երբ անկախ կարգավիճակով գործակալ չհանդիսացող անձը, որի նկատմամբ կիրառվում է 7-րդ կետը, գործում է ձեռնարկության անունից եւ Պայմանավորվող պետությունում ունի եւ սովորաբար իրականացնում է ձեռնարկության անունից պայմանագրեր կնքելու իրավասություն, այդ ձեռնարկությունը համարվում է այդ պետությունում մշտական հաստատություն ունեցող՝ այդ անձի կողմից տվյալ ձեռնարկության համար ձեռնարկվող ցանկացած գործունեության մասով՝ բացառությամբ այն դեպքի, երբ այդպիսի անձի գործունեությունը սահմանափակվում է 5-րդ կետում նշվածով, որը եթե անգամ իրականացվում է գործունեության մշտական վայրի միջոցով, այդ գործունեության մշտական վայրը այդ կետի դրույթների համաձայն չի վերաժամ մշտական հաստատության:

7. Ձեռնարկությունը չի համարվում Պայմանավորվող պետությունում մշտական

հաստատություն ունեցող միայն այն պատճառով, որ այն այդ պետությունում ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում բրոքերի, առևտրային ընդհանուր գործակալի կամ անկախ կարգավիճակ ունեցող ցանկացած այլ գործակալի միջոցով՝ պայմանով, որ այդ անձինք գործում են իրենց սովորական ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում:

8. Այն փաստը, որ Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությունը վերահսկում է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությանը կամ վերահսկվում է նրա կողմից կամ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ մյուս պետությունում (մշտական հաստատության միջոցով կամ այլ կերպով), ինքնին այդ ընկերություններից որեւէ մեկը չի դարձնում մյուսի մշտական հաստատությունը:

Հոդված 6

Անշարժ գույքից ստացված եկամուտը

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից ստացած եկամուտը (ներառյալ գյուղատնտեսությունից կամ անտառային տնտեսությունից ստացած եկամուտը) կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. «Անշարժ գույք» եզրույթն ունի այն նշանակությունը, որը նրան տրված է այն Պայմանավորվող պետության օրենքով, որտեղ գտնվում է դիտարկվող գույքը: Եզրույթն ամեն դեպքում ներառում է անշարժ գույքին օժանդակ գույքը, գյուղատնտեսությունում եւ անտառային տնտեսությունում օգտագործվող անասունն ու սարքավորումները, այն իրավունքները, որոնց նկատմամբ կիրառվում են հողային սեփականությանը վերաբերող ընդհանուր օրենսդրության դրույթները, անշարժ գույքի օգտագործման իրավունքը (ուզուֆրուկտը) եւ օգտակար հանածոների հանքատեղերի, հանքավայրերի եւ այլ բնական պաշարների մշակման կամ մշակման իրավունքի դիմաց փոխհատուցման կարգով վճարվող փոփոխական կամ հաստատուն վճարումների իրավունքները, նավերը եւ օդանավերը որպես անշարժ գույք չեն դիտարկվում:

3. 1-ին կետի դրույթները կիրառվում են անշարժ գույքի անմիջական օգտագործումից, վարձակալության տալու դիմաց կամ ցանկացած այլ ձեով օգտագործումից ստացված եկամուտների նկատմամբ:

4. 1-ին եւ 3-րդ կետերի դրույթները կիրառվում են նաեւ ձեռնարկության անշարժ գույքից ստացված եկամուտների նկատմամբ:

Հոդված 7

Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթը

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության շահույթը ենթակա է հարկման միայն այդ պետությունում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ձեռնարկությունն իր ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնում է մյուս Պայմանավորվող պետությունում՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով: Եթե ձեռնարկությունն իր ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնում է վերը նշված ձեռք, ապա այդ ձեռնարկության շահույթը կարող է հարկվել մյուս պետությունում, բայց միայն այն չափով, որքանով վերագրելի է այդ մշտական հաստատությանը:

2. Հաշվի առնելով 3-րդ կետի դրույթները՝ այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրում այդ մշտական հաստատությանն է վերագրվում այն շահույթը, որը նա կարող էր ստանալ, եթե լիներ միեւնույն կամ համանման պայմաններում միեւնույն կամ համանման գործունեություն իրականացնող ինքնուրույն եւ առանձին ձեռնարկություն եւ գործեր լիովին անկախ այն ձեռնարկությունից, որի մշտական հաստատությունն է:

3. Մշտական հաստատության շահույթը որոշելիս թույլատրվում է կատարել մասհանում մշտական հաստատության բոլոր ծախսերից, այդ թվում՝ կառավարչական եւ ընդհանուր վարչական ծախսերից, ինչը կկատարվեր, եթե մշտական հաստատությունը լիներ անկախ ձեռնարկություն, այնքանով, որքանով դրանք ողջամտորեն հատկացվում են մշտական հաստատությանը՝ անկախ այն հանգամանքից, թե դրանք կատարվել են այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է այդ մշտական հաստատությունը, թե այլ տեղում:

4. Այնքանով, որքանով Պայմանավորվող պետությունում ընդունված է որոշել մշտական հաստատությանը վերագրվող շահույթը՝ ձեռնարկության ամբողջ շահույթը իր տարբեր ենթամասերի միջեւ համամասնական բաշխման հիման վրա, 2-րդ կետը ոչ մի կերպ չի արգելում այդ Պայմանավորվող պետությանը որոշել հարկման ենթակա շահույթը՝ ընդունված բաշխման եղանակով: Այնուամենայնիվ, ընդունված բաշխման եղանակը պետք է լինի այնպիսին, որ արդյունքը համապատասխանի սույն հոդվածում շարադրված սկզբունքներին:

5. Մշտական հաստատության կողմից ձեռնարկության համար միայն

ապրանքների կամ արտադրանքի գնումը հիմք չէ այդ մշտական հաստատությանը որեւէ շահույթ վերագրելու համար:

6. Նախորդ կետերի նպատակներով մշտական հաստատությանը վերագրվող շահույթն ամեն տարի որոշվում է միեւնույն եղանակով, քանի դեռ չկա այն փոխելու համար հիմնավոր եւ բավարար պատճառ:

7. Եթե շահույթը ներառում է սույն համաձայնագրի այլ հոդվածներում առանձին քննարկվող եկամտի տեսակներ, ապա սույն հոդվածի դրույթները չեն ազդում այդ հոդվածների դրույթների վրա:

Հոդված 8

Միջազգային ծովային եւ օդային փոխադրումները

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում նավերի կամ օդանավերի շահագործումից ստացված շահույթը ենթակա է հարկման միայն այդ պետությունում:

2. 1-ին կետի դրույթները կիրառվում են նաեւ միավորումում, համատեղ ձեռնարկությունում կամ տրանսպորտային միջոցների շահագործմամբ զբաղվող միջազգային կազմակերպությունում մասնակցությունից ստացված շահույթի նկատմամբ:

3. Սույն հոդվածի նպատակներով միջազգային փոխադրումներում նավերի կամ օդանավերի շահագործումից ստացված շահույթը ներառում է՝

ա) նավերի կամ օդանավերի «անշունչ» (առանց անձնակազմի) սկզբունքով վարձակալությունից ստացված շահույթը, եւ

բ) ապրանքների կամ արտադրանքի փոխադրման համար օգտագործվող բեռնարկղերի (այդ թվում՝ կցասայլերի եւ այդ բեռնարկղերի փոխադրման հետ կապված սարքավորումների) օգտագործումից, պահպանումից կամ վարձակալությունից ստացված շահույթը, այն դեպքում, երբ, հանգամանքներից կախված, այդպիսի վարձակալությունը կամ օգտագործումը, պահպանումը կամ վարձակալությունը կապված է միջազգային փոխադրումներում նավերի կամ օդանավերի շահագործման հետ:

Հոդված 9

Փոխկապակցված ձեռնարկությունները

1. Այն դեպքում, երբ՝

ա) Պայմանավորվող պետության ձեռնարկությունն ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում է մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում, կամ

բ) միեւնույն անձինք ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում են Պայմանավորվող պետության ձեռնարկության եւ մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում, եւ յուրաքանչյուր դեպքում, երբ երկու ձեռնարկությունների միջեւ նրանց առեւտրային կամ ֆինանսական փոխհարաբերություններում ստեղծվում կամ սահմանվում են պայմաններ, որոնք տարբերվում են այն պայմաններից, որոնք կարող էին լինել անկախ ձեռնարկությունների միջեւ, ցանկացած շահույթ, որը հաշվեգրված կլիներ նրանցից մեկին, բայց այդ պայմանների պատճառով նման ձեռով չի հաշվեգրվել, կարող է ներառվել այդ ձեռնարկության շահույթի մեջ եւ համապատասխանաբար հարկվել:

2. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետությունն այդ պետության ձեռնարկության շահույթում ներառում եւ համապատասխանաբար հարկում է այն շահույթը, որի նկատմամբ մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ենթարկվել է հարկման այդ մյուս պետությունում, եւ այդ ձեռով ներառված շահույթի բոլոր տարրերը համարվում են շահույթ, որը պետք է հաշվեգրված լիներ նշված առաջին պետության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջեւ պայմանները լինեին այնպիսին, ինչպիսին կլինեին անկախ ձեռնարկությունների միջեւ, այդ դեպքում այդ մյուս պետությունը կատարում է այդ շահույթից իր գանձած հարկի գումարի համապատասխան ճշգրտում: Այդ ճշգրտումը որոշելիս հաշվի են առնվում սույն համաձայնագրի մյուս դրույթները, եւ Պայմանավորվող պետությունների իրավասու մարմիններն անհրաժեշտության դեպքում խորհրդակցում են միմյանց հետ:

Հոդված 10

Շահաբաժինները

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված շահաբաժինները կարող են հարկվել այդ մյուս պետությունում:

2. Սակայն այդպիսի շահաբաժինները կարող են հարկվել նաեւ այն

Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է շահաբաժիններ վճարող ընկերությունը, եւ այդ պետության օրենքներին համապատասխան, սակայն եթե շահաբաժինների՝ շահույթ ստացող սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա այդ ձեռով գանձվող հարկը չպետք է գերազանցի՝

ա) շահաբաժինների համախառն գումարի 0 տոկոսը, եթե շահաբաժինների՝ շահույթ ստացող սեփականատերը՝

i) ընկերություն է, որն ուղղակիորեն տնօրինում է շահաբաժինները վճարող ընկերության կապիտալի առնվազն 25 տոկոսը, կամ

ii) ընկերություն է, որն առնվազն 300 000 ԱՄՆ դոլար (կամ ցանկացած այլ փոխարժեքով համարժեք գումար) է ներդրել շահաբաժինները վճարող ընկերության կանոնադրական կապիտալում.

բ) շահաբաժինների համախառն գումարի 5 տոկոսը՝ մյուս բոլոր դեպքերում:

Սույն կետի դրույթները չեն ազդում ընկերության այն շահույթի հարկման վրա, որից վճարվում են շահաբաժինները:

3. Չնայած 2-րդ կետի դրույթներին՝ մի Պայմանավորվող պետությունում առաջացող եւ մյուս Պայմանավորվող պետության կառավարությանը վճարվող շահաբաժիններն ազատվում են հարկումից նշված առաջին Պայմանավորվող պետությունում: «Կառավարություն» եզրույթը նշանակում է՝

ա) Սինգապուրի դեպքում՝ Սինգապուրի Հանրապետության կառավարությունը, եւ նաեւ ներառում է՝

i) Կենտրոնական բանկը (Սինգապուրի դրամավարկային մարմին) եւ բացառապես իրեն պատկանող (ուղղակի կամ անուղղակի) դուատր ձեռնարկությունները.

ii) օրենքով սահմանված մարմին, եւ

iii) մարմիններ, այդ թվում՝ ներդրումային հատուկ հիմնադրամները կամ կազմավորումները, որոնք բացառապես պատկանում են Սինգապուրի Հանրապետության կառավարությանը (ուղղակի կամ անուղղակի) եւ ստեղծվել են ներդրումներ կատարելու եւ կառավարելու Սինգապուրի Հանրապետության կառավարության ակտիվները, եւ որոնց դեպքում վճարված շահաբաժիններն առնչվում են այդ ակտիվներին: Կասկածներից զերծ մնալու համար այն ներառում է, բայց չի սահմանափակվում հետեւյալով՝ «ԶիԱյՍի» [GIC] սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «ԶիԱյՍի (Անշարժ գույք)» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «ԶիԱյՍի (Ձեռնարկություններ)» ՍՊԸ,

«Եվրովեստ» ՍՊԸ եւ բացառապէս իրենց պատկանող (ուղղակի կամ անուղղակի) դուստր ձեռնարկություններ.

բ) Հայաստանի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը եւ նաեւ ներառում է՝

i) վարչատարածքային ստորաբաժանումները կամ դրանց տեղական մարմինները, եւ

ii) Կենտրոնական բանկը:

4. «Շահաբաժիններ» եզրույթը սույն հոդվածում գործածվելիս նշանակում է եկամուտ բաժնետոմսերից կամ պարտապահանջ չհամարվող՝ շահույթին մասնակցելու իրավունք տվող այլ իրավունքներից, ինչպէս նաեւ եկամուտ այլ բաժնետիրական իրավունքներից, որը ենթակա է հարկային կարգավորման այնպէս, ինչպէս բաժնետոմսերից եկամուտն այն պետության օրենքների համաձայն, որի ռեզիդենտն է բաշխումն իրականացնող ընկերությունը:

5. 1-ին եւ 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժինների՝ շահույթ ստացող սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտ է շահաբաժիններ վճարող ընկերությունը, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, եւ մասնակցությունը, որի համար վճարվում են շահաբաժինները, փաստացի կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

6. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությունը շահույթ կամ եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող պետությունից, այդ մյուս պետությունը չի կարող հարկել ընկերության կողմից վճարված շահաբաժինները՝ բացառությամբ այն դեպքի, երբ այդպիսի շահաբաժինները վճարվում են այդ մյուս պետության ռեզիդենտին, կամ երբ մասնակցությունը, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, փաստացի կապված է այդ մյուս պետությունում գտնվող մշտական հաստատության հետ, եւ չի կարող ընկերության չբաշխված շահույթը ենթարկել հարկման՝ ընկերության չբաշխված շահույթից գանձվող հարկով, եթե անգամ վճարված շահաբաժինները կամ չբաշխված շահույթն ամբողջությամբ կամ մասամբ կազմված են այդ մյուս պետությունում առաջացող շահույթից կամ եկամտից:

Հոդված 11

Տոկոսները

1. Պայմանավորվող պետությունում առաջացող եւ մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարվող տոկոսները կարող են հարկվել այդ մյուս պետությունում:

2. Սակայն այդպիսի տոկոսները կարող են հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են, եւ այդ պետության օրենքներին համապատասխան, բայց եթե տոկոսների՝ շահույթ ստացող սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա այդ ձեռով գանձված հարկը չպետք է գերազանցի տոկոսների համախառն գումարի 5 տոկոսը:

3. Չնայած 2-րդ կետի դրույթներին՝ տոկոսները, որոնք առաջանում են մի Պայմանավորվող պետությունում եւ վճարվում մյուս Պայմանավորվող պետության կառավարությանը կամ ստացվում են նշված առաջին Պայմանավորվող պետության կառավարության կողմից երաշխավորված վարկերից (բացառությամբ Կենտրոնական բանկի կողմից երաշխավորված վարկերի), կամ վճարվում են բացառապես Կառավարությանը պատկանող ցանկացած ֆինանսական կազմակերպության, ազատվում են հարկումից նշված առաջին Պայմանավորվող պետությունում: «Կառավարություն» եզրույթը նշանակում է՝

ա) Սինգապուրի դեպքում՝ Սինգապուրի Հանրապետության կառավարությունը եւ նաեւ ներառում է՝

i) Կենտրոնական բանկը (Սինգապուրի դրամավարկային մարմին) եւ բացառապես իրեն պատկանող (ուղղակի կամ անուղղակի) դուստր ձեռնարկությունները.

ii) օրենքով սահմանված մարմին, եւ

iii) մարմիններ, այդ թվում՝ ներդրումային հատուկ հիմնադրամները կամ կազմավորումները, որոնք բացառապես պատկանում են Սինգապուրի Հանրապետության կառավարությանը (ուղղակի կամ անուղղակի) եւ ստեղծվել են ներդրումներ կատարելու եւ կառավարելու Սինգապուրի Հանրապետության կառավարության ակտիվները, եւ որոնց դեպքում վճարված շահաբաժիններն առնչվում են այդ ակտիվներին: Կասկածներից զերծ մնալու համար այն ներառում է, բայց չի սահմանափակվում հետեւյալով՝ «ԶիԱյՍի» [GIC] սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «ԶիԱյՍի (Անշարժ գույք)» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «ԶիԱյՍի (Ձեռնարկություններ)» ՍՊԸ,

«Եվրովեստ» ՍՊԸ եւ բացառապէս իրենց պատկանող (ուղղակի կամ անուղղակի) դուստր ձեռնարկություններ.

բ) Հայաստանի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը եւ նաեւ ներառում է՝

i) վարչատարածքային ստորաբաժանումները կամ դրանց տեղական մարմինները, եւ

ii) Կենտրոնական բանկը:

4. «Տոկոսներ» եզրույթը սույն հոդվածում գործածվելիս նշանակում է եկամուտ բոլոր տեսակի պարտապահանջներից՝ անկախ հիփոթեքային ապահովումից եւ պարտապանի շահույթում մասնակցության իրավունքի առկայությունից, եւ մասնավորապէս՝ եկամուտ պետական արժեթղթերից եւ եկամուտ պարտատոմսերից կամ փոխառության տոմսերից, ներառյալ՝ այդ արժեթղթերի, պարտատոմսերի կամ փոխառության տոմսերի հետ կապված պարգեւավճարներն ու մրցանակները: Ժամկետանց վճարման համար գանձվող տույժերը սույն հոդվածի նպատակներով որպէս տոկոսներ չեն դիտարկվում:

5. 1-ին եւ 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթէ տոկոսների՝ շահույթ ստացող սեփականատերը, լինելով մի Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են տոկոսները, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, եւ պարտապահանջը, որի կապակցությամբ վճարվում են տոկոսները, փաստացի կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

6. Տոկոսները համարվում են առաջացած Պայմանավորվող պետությունում, եթէ վճարողն այդ պետության ռեզիդենտ է: Սակայն այն դեպքում, երբ տոկոսներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն, որի կապակցությամբ առաջացել է պարտքը, որի տոկոսները վճարվում են, եւ այդ տոկոսների վճարման ծախսերը կրում է այդ մշտական հաստատությունը, այս դեպքում այդ տոկոսները համարվում են առաջացած այն պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը:

7. Այն դեպքում, երբ վճարողի եւ շահույթ ստացող սեփականատիրոջ կամ նրանց երկուսի եւ որեւէ այլ անձի միջեւ հատուկ հարաբերությունների պատճառով պարտապահանջի առնչությամբ վճարվող տոկոսների գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի եւ շահույթ ստացող սեփականատիրոջ միջեւ

նման հարաբերությունների բացակայության դեպքում, սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջին նշված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա՝ յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքներին համապատասխան՝ հաշվի առնելով սույն համաձայնագրի մյուս դրույթները:

Հոդված 12

Ռոյալթիները

1. Պայմանավորվող պետությունում առաջացող եւ մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարվող ռոյալթիները կարող են հարկվել այդ մյուս պետությունում:

2. Սակայն այդպիսի ռոյալթիները կարող են նաեւ հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են, եւ այդ պետության օրենքներին համապատասխան. բայց եթե ռոյալթիների շահույթ ստացող սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա այդ ձեռով գանձված հարկը չպետք է գերազանցի ռոյալթիների համախառն գումարի 5 տոկոսը:

3. «Ռոյալթիներ» եզրույթը սույն հոդվածում գործածվելիս նշանակում է ցանկացած տեսակի վճարում, որը որպես փոխհատուցում ստացվել է գրականության, արվեստի կամ գիտական աշխատանքի, այդ թվում՝ կինոնկարների կամ ռադիոհաղորդումների կամ հեռուստատեսային հաղորդումների հեռարձակման համար օգտագործվող ֆիլմերի կամ ձայներիզների, ցանկացած պատենտի, ապրանքային նշանի, նախագծի կամ մոդելի, գծագրի, գաղտնի բանաձեւի կամ գործընթացի ցանկացած հեղինակային իրավունքի օգտագործման կամ օգտագործման իրավունքի համար կամ արդյունաբերական, առետրական կամ գիտական փորձին վերաբերող տեղեկության համար:

4. 1-ին եւ 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե ռոյալթիների շահույթ ստացող սեփականատերը, լինելով մի Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են ռոյալթիները, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, եւ իրավունքը կամ գույքը, որի կապակցությամբ վճարվում են ռոյալթիները, փաստացի կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

5. Ռոյալթիները համարվում են առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն այդ պետության ռեզիդենտ է: Սակայն այն դեպքում, երբ ռոյալթիներ

վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն, որի կապակցությամբ առաջացել է ռոյալթիներ վճարելու պարտավորությունը, եւ այդպիսի ռոյալթիների վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը, այդ դեպքում այդպիսի ռոյալթիները համարվում են առաջացած այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը:

6. Այն դեպքում, երբ վճարողի եւ շահույթ ստացող սեփականատիրոջ կամ նրանց երկուսի եւ որեւէ այլ անձի միջեւ հատուկ հարաբերությունների պատճառով օգտագործման, իրավունքի կամ տեղեկության համար վճարվող ռոյալթիների գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի եւ շահույթ ստացող սեփականատիրոջ միջեւ նման հարաբերությունների բացակայության դեպքում, սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն նշված վերջին գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա՝ յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքներին համապատասխան՝ հաշվի առնելով սույն համաձայնագրի մյուս դրույթները:

Հոդված 13

Գույքի արժեքի հավելաճը

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող՝ 6-րդ հոդվածում նշված անշարժ գույքի օտարումից ստացված արժեքի հավելաճը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. Պայմանավորվող պետության ձեռնարկությանը պատկանող՝ մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքի օտարումից առաջացած արժեքի հավելաճը, ներառյալ՝ այդպիսի մշտական հաստատության (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ մեկտեղ) օտարումից առաջացած այդպիսի արժեքի հավելաճը, կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

3. Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող նավերի կամ օդանավերի կամ այդպիսի նավերի կամ օդանավերի շահագործման հետ կապված շարժական գույքի օտարումից ստացված արժեքի հավելաճը ենթակա է հարկման միայն այդ պետությունում:

4. 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերում նշվածից տարբեր ցանկացած այլ գույքի օտարումից առաջացած արժեքի հավելաճը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է գույքն օտարողը:

Հոդված 14

Վարձու աշխատանքից ստացված եկամուտը

1. Հաշվի առնելով 15-րդ, 17-րդ եւ 18-րդ հոդվածների դրույթները՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ վարձու աշխատանքի դիմաց ստացած աշխատավարձը, աշխատանքի դիմաց վարձատրությունը եւ համանման այլ վարձատրություններ ենթակա են հարկման միայն այդ պետությունում, եթե այդպիսի աշխատանքը չի իրականացվում մյուս Պայմանավորվող պետությունում: Եթե վարձու աշխատանքն իրականացվում է այդ կերպ, ապա դրա դիմաց ստացված վարձատրությունը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. Չնայած 1-ին կետի դրույթներին՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը ենթակա է հարկման միայն հիշատակված առաջին պետությունում, եթե՝

ա) ստացողը դիտարկվող ֆինանսական տարվա ընթացքում սկսվող կամ ավարտվող ցանկացած տասներկուամսյա ժամանակահատվածում գտնվում է մյուս պետությունում՝ ընդհանուր առմամբ 183 օրը չգերազանցող ժամկետով կամ ժամկետներով, եւ

բ) վարձատրությունը վճարվում է մյուս պետության ռեզիդենտ չհանդիսացող գործատուի կողմից կամ նրա անունից, եւ

գ) վարձատրության ծախսերը չի կրում գործատուի՝ մյուս պետությունում գտնվող մշտական հաստատությունը:

3. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող նավի տախտակամածի վրա կամ օդանավում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը կարող է հարկվել այդ պետությունում:

Հոդված 15

Տնօրենների հոնորարները

Տնօրենների հոնորարները եւ այլ համանման վճարումներ, որոնք Պայմանավորվող պետության ռեզիդենտն ստանում է որպես մյուս Պայմանավորվող

պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության տնօրենների խորհրդի անդամ, կարող են հարկվել այդ մյուս պետությունում:

Հոդված 16

Արվեստի գործիչները եւ մարզիկները

1. Չնայած 7-րդ եւ 14-րդ հոդվածների դրույթներին՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ մյուս Պայմանավորվող պետությունում որպես արվեստի գործիչ՝ թատրոնի, կինոյի, ռադիոյի կամ հեռուստատեսության արտիստ կամ երաժիշտ, կամ որպես մարզիկ իրականացրած իր անձնական գործունեությունից ստացած եկամուտը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. Այն դեպքում, երբ արվեստի գործչի կամ մարզիկի՝ որպես այդպիսին, իրականացրած անձնական գործունեության հետ կապված եկամուտը հաշվեգրվում է ոչ թե անհատապես արվեստի գործչին կամ մարզիկին, այլ մեկ ուրիշ անձի, այդ եկամուտը, չնայած 7-րդ եւ 14-րդ հոդվածների դրույթներին, կարող է հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ իրականացվում է արվեստի գործչի կամ մարզիկի գործունեությունը:

3. 1-ին եւ 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում այն եկամտի նկատմամբ, որը ստացվում է Պայմանավորվող պետությունում արվեստի գործչի կամ մարզիկի իրականացրած գործունեությունից այն դեպքում, երբ այդ պետություն կատարած այցն ամբողջովին կամ հիմնականում ֆինանսավորվել է Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի կամ վերջիններիս վարչատարածքային ստորաբաժանումների, իշխանության տեղական մարմինների կամ օրենքով սահմանված մարմինների պետական միջոցներից, կամ այդ գործունեությունը հաստատվել է երկու Պայմանավորվող պետությունների կողմից՝ Պայմանավորվող պետությունների միջեւ մշակութային կամ մարզական փոխանակման ծրագրերի շուրջ համաձայնության շրջանակներում: Այդ դեպքում եկամուտը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է արվեստի գործիչը կամ մարզիկը:

Հոդված 17

Կենսաթոշակները

18-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթների համաձայն՝ մի Պայմանավորվող պետությունում առաջացած եւ մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին

նախկինում կատարած վարձու աշխատանքի համար վճարված կենսաթոշակները եւ համանման այլ վարձատրություններ ենթակա են հարկման միայն նշված առաջին պետությունում:

Հոդված 18

Պետական ծառայությունը

1. ա) Պայմանավորվող պետության կամ նրա վարչատարածքային ստորաբաժանման, իշխանության տեղական մարմնի կամ օրենքով սահմանված մարմնի կողմից այդ պետությանը կամ ստորաբաժանմանը կամ մարմնին մատուցված ծառայությունների դիմաց ֆիզիկական անձին վճարված աշխատավարձը, աշխատանքի դիմաց վարձատրությունը եւ համանման այլ վարձատրություններ ենթակա են հարկման միայն այդ պետությունում:

բ) Սակայն այդպիսի աշխատավարձը, աշխատանքի դիմաց վարձատրությունը եւ համանման այլ վարձատրություններ ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ծառայությունները մատուցվում են այդ պետությունում եւ այդ պետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձի կողմից, որը՝

i) այդ պետության քաղաքացի է. կամ

ii) չի դարձել այդ պետության ռեզիդենտ՝ բացառապես ծառայություններ մատուցելու նպատակով:

2. ա) Չնայած 1-ին կետի դրույթներին՝ Պայմանավորվող պետության կամ նրա վարչատարածքային ստորաբաժանման, իշխանության տեղական մարմնի կամ օրենքով սահմանված մարմնի կողմից կամ նրանց ստեղծած հիմնադրամներից այդ պետությանը կամ ստորաբաժանմանը կամ մարմնին մատուցված ծառայությունների դիմաց ֆիզիկական անձին վճարված կենսաթոշակները եւ համանման այլ վարձատրություններ ենթակա են հարկման միայն այդ պետությունում:

բ) Սակայն այդպիսի կենսաթոշակները եւ համանման այլ վարձատրություններ ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ֆիզիկական անձն այդ պետության ռեզիդենտն ու քաղաքացին է:

3. 14-րդ, 15-րդ, 16-րդ եւ 17-րդ հոդվածների դրույթները կիրառվում են Պայմանավորվող պետության կամ նրա վարչատարածքային ստորաբաժանման, իշխանության տեղական մարմնի կամ օրենքով սահմանված մարմնի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հետ կապված ծառայությունների դիմաց աշխատավարձի, աշխատանքի դիմաց վարձատրության, կենսաթոշակի եւ

համանման այլ վարձատրությունների նկատմամբ:

Հոդված 19

Ուսանողները

Ուսանողը կամ փորձնակը, որը հանդիսանում է կամ անմիջապես մինչև Պայմանավորվող պետություն ժամանելը հանդիսացել է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, եւ որը գտնվում է նշված առաջին Պայմանավորվող պետությունում բացառապես իր ուսման կամ մասնագիտացման նպատակով, ենթակա չէ հարկման այդ Պայմանավորվող պետությունում իր ապրելու, ուսանելու կամ մասնագիտանալու համար ստացված վճարումներից՝ պայմանով, որ այդպիսի վճարումներն առաջացել են այդ Պայմանավորվող պետությունից դուրս գտնվող աղբյուրներից:

Հոդված 20

Դասախոսները, ուսուցիչները եւ գիտահետազոտողները

Ֆիզիկական անձը, որը հանդիսանում է կամ անմիջապես մինչև մյուս Պայմանավորվող պետություն մեկնելը հանդիսացել է Պայմանավորվող պետության ռեզիդենտ, եւ որը նշված առաջին պետության կառավարության կամ այդ նշված առաջին պետության համալսարանի, քոլեջի, դպրոցի, թանգարանի կամ մշակութային այլ հաստատության հրավերով կամ մշակութային փոխանակման պաշտոնական ծրագրի շրջանակներում այդպիսի հաստատություններում դասավանդելու, դասախոսություններ կարդալու կամ հետազոտություններ կատարելու նպատակով գտնվում է այդ պետությունում իրար հաջորդող 2 տարին չգերազանցող ժամկետով, այդ պետությունում ազատվում է հարկերից, որոնք սահմանված են այդպիսի գործունեության համար՝ պայմանով, որ այդպիսի վարձատրությունն առաջացել է այդ պետությունից դուրս գտնվող աղբյուրներից:

Հոդված 21

Այլ եկամուտ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի եկամտի տեսակները, որոնք նշված չեն սույն նախորդ հոդվածներում, անկախ դրանց առաջացման վայրից, ենթակա են հարկման միայն այդ պետությունում:

2. 1-ին կետի դրույթները չեն կիրառվում 6-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված անշարժ գույքի եկամտից տարբերվող եկամտի նկատմամբ, եթե այդպիսի եկամուտ ստացողը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, եւ իրավունքը կամ գույքը, որի կապակցությամբ վճարվում է եկամուտը, փաստացի կապված է այդ մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

3. Չնայած 1-ին եւ 2-րդ կետերի դրույթներին՝ մի Պայմանավորվող պետության ռեզիդենտի եկամտի տեսակները, որոնք նշված չեն սույն համաձայնագրի նախորդ հոդվածներում եւ առաջանում են մյուս Պայմանավորվող պետությունում, կարող են հարկվել նաեւ այդ մյուս պետությունում:

Հոդված 22

Կրկնակի հարկման բացառումը

1. Սինգապուրի դեպքում կրկնակի հարկումը բացառվում է հետեւյալ կերպ.

Այն դեպքում, երբ Սինգապուրի ռեզիդենտը եկամուտ է ստանում Հայաստանում, որը, սույն համաձայնագրի դրույթներին համապատասխան, կարող է հարկվել Հայաստանում, Սինգապուրը, համաձայն Սինգապուրից բացի ցանկացած այլ երկրում վճարման ենթակա հարկի՝ սինգապուրյան հարկի զեղչի թույլտվության վերաբերյալ իր օրենքների, թույլ է տալիս, որ վճարվի հայկական հարկը՝ ուղղակիորեն կամ մասհանմամբ՝ որպես այդ ռեզիդենտի եկամտի մասով վճարման ենթակա սինգապուրյան հարկի զեղչ: Այն դեպքում, երբ այդ եկամուտը շահաբաժին է, որը Հայաստանի ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը վճարում է Սինգապուրի ռեզիդենտին, որին ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում է նշված առաջին ընկերության բաժնետիրական կապիտալի 10 տոկոսից ոչ պակաս մասը, զեղչը հաշվարկելիս հաշվի է առնվում այդ ընկերության կողմից վճարված հայկական հարկն իր շահույթի այն մասով, որից վճարվում է շահաբաժինը:

2. Հայաստանի դեպքում կրկնակի հարկումը բացառվում է հետեւյալ կերպ.

ա) եթե Հայաստանի ռեզիդենտը եկամուտ է ստանում, որը, սույն համաձայնագրի դրույթներին համապատասխան, կարող է հարկվել Սինգապուրում, ապա Հայաստանը թույլատրում է այդ ռեզիդենտի եկամտից գանձվող հարկից հանել Սինգապուրում վճարված եկամտահարկին հավասար գումար: Սակայն այդպիսի մասհանումը չպետք է գերազանցի մասհանումը տրամադրելուց առաջ հաշվարկված

եկամտահարկի այն մասը, որը վերագրվում է այն եկամտին, որը կարող է հարկվել Սինգապուրում.

բ) եթե սույն համաձայնագրի որեւէ դրույթին համապատասխան Հայաստանի ռեզիդենտի ստացած եկամուտն ազատվում է հարկերից Հայաստանում, ապա Հայաստանն այդ ռեզիդենտի մնացած եկամտի մասով հարկի գումարը հաշվարկելիս, այնուհանդերձ, կարող է հաշվի առնել հարկերից ազատված եկամուտը:

Հոդված 23

Խտրականության արգելքը

1. Պայմանավորվող պետության քաղաքացիները մյուս Պայմանավորվող պետությունում չպետք է ենթարկվեն որեւէ այլ կամ առավել ծանր հարկման կամ դրա հետ կապված որեւէ պահանջի, քան այն հարկումն ու դրա հետ կապված պահանջներն են, որոնց միեւնույն հանգամանքներում, մասնավորապես՝ կապված ռեզիդենտության հետ ենթարկվում են կամ կարող են ենթարկվել այդ մյուս պետության քաղաքացիները:

2. Պայմանավորվող պետության ձեռնարկության՝ մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած մշտական հաստատության հարկումն այդ մյուս պետությունում չպետք է պակաս բարենպաստ լինի այդ մյուս պետության՝ միեւնույն գործունեությունն իրականացնող ձեռնարկության հարկումից: Սույն դրույթը չպետք է մեկնաբանվի որպես Պայմանավորվող պետության համար պարտավորություն՝ մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտներին քաղաքացիական կարգավիճակի կամ ընտանեկան հանգամանքների հիման վրա հարկման նպատակներով տրամադրելու այնպիսի անձնական արտոնություններ, նվազեցումներ եւ զեղչեր, ինչպիսիք Պայմանավորվող պետությունը չնորհում է իր ռեզիդենտներին:

3. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 9-րդ հոդվածի 1-ին, 11-րդ հոդվածի 7-րդ կամ 12-րդ հոդվածի 6-րդ կետերի դրույթները՝ տոկոսները, ռոյալթիները եւ Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին կատարվող մյուս վճարումներն այդ ձեռնարկության հարկվող շահույթը որոշելու նպատակով ենթակա են մասհանման այն նույն պայմաններով, որոնցով դրանք կվճարվեին նշված առաջին պետության ռեզիդենտին: Նույն կերպ, Պայմանավորվող պետության ձեռնարկության ցանկացած պարտք՝ մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին, այդ ձեռնարկության հարկվող գույքը որոշելու նպատակով պետք է ենթակա լինի մասհանման այն նույն պայմաններով, որոնցով այն կմասհանվեր նշված առաջին պետության ռեզիդենտի դեպքում: Սույն կետի նպատակներով հասկանալի է, որ ոչ ռեզիդենտին տոկոսների վճարման

մասհանում թույլատրելու նպատակներով սույն կետի ոչ մի դրույթ չի խոչընդոտում, որ Պայմանավորվող պետությունը թույլ չտա այդպիսի տոկոսների վճարման մասհանումը, եթե հարկը չի գանձվում այդ վճարման մասով:

4. Պայմանավորվող պետության ձեռնարկությունները, որոնց գույքն ամբողջությամբ կամ մասամբ պատկանում է կամ ուղղակի կամ անուղղակի կերպով վերահսկվում է մյուս Պայմանավորվող պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կողմից, չպետք է նշված առաջին պետությունում ենթարկվեն որեւէ այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված որեւէ պահանջի, քան այն հարկումն ու դրա հետ կապված պահանջներն են, որոնց ենթարկվում են կամ կարող են ենթարկվել նշված առաջին պետության այլ նման ձեռնարկություններ:

5. Երբ Պայմանավորվող պետությունը, իր ազգային քաղաքականությանը եւ չափորոշիչներին համապատասխան, իր քաղաքացիներին տրամադրում է տնտեսական կամ սոցիալական զարգացումը խթանելու համար նախատեսված հարկային արտոնություններ, սույն հոդվածի շրջանակներում չպետք է մեկնաբանվի որպես խտրականություն:

6. Սույն հոդվածի դրույթները կիրառվում են սույն համաձայնագրի կարգավորման առարկա հանդիսացող հարկերի նկատմամբ:

Հոդված 24

Փոխհամաձայնեցման ընթացակարգը

1. Այն դեպքում, երբ անձը գտնում է, որ Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցնում են կամ կհանգեցնեն իր՝ սույն համաձայնագրի դրույթներին չհամապատասխանող հարկման, նա կարող է, այդ պետությունների ներպետական օրենքներով նախատեսված իրավական պաշտպանության միջոցներից անկախ, իր գործը ներկայացնել այն Պայմանավորվող պետության իրավասու մարմին, որի ռեզիդենտն է ինքը: Գործը պետք է ներկայացվի համաձայնագրի դրույթներին չհամապատասխանող հարկման հանգեցնող գործողության մասին առաջին ծանուցումից հետո՝ երեք տարվա ընթացքում:

2. Եթե իրավասու մարմինը բողոքը համարում է հիմնավոր, եւ եթե ինքն ի վիճակի չէ հանգելու գոհացուցիչ լուծման, ապա վերջինս ձգտում է գործը լուծել մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնի հետ փոխհամաձայնությամբ՝ սույն համաձայնագրին չհամապատասխանող հարկումը բացառելու նպատակով: Ձեռք բերված ցանկացած համաձայնություն պետք է կատարվի՝ անկախ Պայմանավորվող պետությունների ներպետական օրենքներում առկա որեւէ ժամկետային

սահմանափակումից:

3. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման ընթացքում առաջացող ցանկացած դժվարություն կամ կասկած ձգտում են կարգավորել փոխհամաձայնությամբ: Նրանք կարող են խորհրդակցել նաեւ համաձայնագրով չնախատեսված դեպքերում՝ կրկնակի հարկումը բացառելու նպատակով:

4. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կարող են անմիջական կապ հաստատել միմյանց հետ՝ նախորդ կետերի առնչությամբ համաձայնության հասնելու նպատակով:

5. Այն դեպքում, երբ՝

ա) 1-ին կետի համաձայն՝ անձը Պայմանավորվող պետության իրավասու մարմին է ներկայացրել գործ այն հիմքով, որ Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցրել են այդ անձի համար սույն համաձայնագրի դրույթներին չհամապատասխանող հարկման, եւ

բ) այդ գործը կարգավորելու համար իրավասու մարմինների կողմից պահանջված ամբողջ տեղեկատվությունը երկու իրավասու մարմիններին ներկայացվելուց հետո՝ երկու տարվա ընթացքում, իրավասու մարմինները չեն կարողանում համաձայնության գալ 2-րդ կետով սահմանված կարգով այդ գործը լուծելու համար (բացառությամբ այն դեպքերի, երբ նախքան այդ ժամկետը լրանալը Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները համաձայնության են եկել այդ գործի առնչությամբ մեկ այլ ժամկետի շուրջ եւ ծանուցել են այն անձին, որը ներկայացրել է այդ գործը համաձայնեցման), այդ գործից բխող ցանկացած չլուծված խնդիր պետք է ներկայացվի արբիտրաժ, եթե անձը դա գրավոր պահանջի: Այնուամենայնիվ, այդ չլուծված խնդիրները չեն կարող ներկայացվել արբիտրաժ, եթե պետություններից որեւէ մեկի դատարանի կամ վարչական տրիբունալի կողմից այդ խնդիրների վերաբերյալ արդեն իսկ կայացվել է որոշում: Բացառությամբ այն դեպքերի, եթե գործին ուղղակիորեն առնչություն ունեցող անձը չի ընդունում արբիտրաժային որոշումը կատարելու փոխադարձ համաձայնությունը, այդ որոշումը պարտադիր է երկու Պայմանավորվող պետությունների համար եւ պետք է իրականացվի՝ անկախ այդ պետությունների ներպետական օրենքներով սահմանված ժամկետային սահմանափակումից: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կարող են փոխադարձ համաձայնությամբ կարգավորել սույն կետի կիրառման կարգը:

Հոդված 25

Տեղեկությունների փոխանակումը

1. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխանակում են տեղեկություններ, որոնք պատշաճ կհամարվեն Պայմանավորվող պետությունների կամ նրանց վարչատարածքային ստորաբաժանումների կամ իշխանության տեղական մարմինների անունից կիրառվող ցանկացած տեսակի եւ բնույթի հարկերի առնչությամբ սույն համաձայնագրի դրույթների իրականացման կամ ներպետական օրենքների կիրառման կամ կատարման համար այնքանով, որքանով դրանց հիման վրա հարկումը չի հակասում համաձայնագրին: Տեղեկությունների փոխանակումը չի սահմանափակվում 1-ին եւ 2-րդ հոդվածներով:

2. Պայմանավորվող պետության՝ 1-ին կետի համաձայն ստացած ցանկացած տեղեկություն դիտարկվում է գաղտնի, ինչպես այդ պետության ներքին օրենքներին համապատասխան ստացված տեղեկությունը, եւ հաղորդվում է միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները եւ վարչական մարմինները), որոնք առնչվում են 1-ին կետում նշված հարկերի գնահատմանը կամ գանձմանը, հարկադիր բռնագանձմանը կամ դատական հետապնդմանը, բողոքարկումների քննմանը կամ վերոնշյալի վերահսկմանը: Այդ անձինք կամ մարմինները տեղեկությունն օգտագործում են միայն այդ նպատակներով: Նրանք կարող են հրապարակել տեղեկությունը բաց դատական նիստի ընթացքում կամ դատական որոշումների ժամանակ: Չնայած վերոնշյալին՝ Պայմանավորվող պետության ստացած տեղեկությունը կարող է օգտագործվել այլ նպատակներով, եթե այլ նպատակներով այդպիսի տեղեկության օգտագործումը թույլատրվում է երկու պետությունների օրենքներով, եւ տեղեկությունը տրամադրող պետության իրավասու մարմինը թույլատրում է նման օգտագործումը:

3. 1-ին եւ 2-րդ կետերի դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես Պայմանավորվող պետության համար պարտավորություն առաջացնող

ա) իրականացնելու իր կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներին եւ վարչական պրակտիկային հակասող վարչական միջոցառումներ.

բ) տրամադրելու տեղեկություններ, որոնք հասանելի չեն իր կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներով կամ վարչարարության բնականոն գործընթացում.

գ) տրամադրելու տեղեկություններ, որոնք բացահայտում են որեւէ

առեւտրային, ձեռնարկատիրական, արդյունաբերական, կոմերցիոն կամ մասնագիտական գաղտնիք կամ առեւտրային գործընթաց, կամ տեղեկություններ, որոնց բացահայտումը հակասում է պետական քաղաքականությանը (հասարակական կարգին):

4. Եթե Պայմանավորվող պետությունը տեղեկություններ է պահանջում սույն հոդվածի համաձայն, ապա մյուս Պայմանավորվող պետությունը պետք է օգտագործի տեղեկություններ ձեռք բերելու իր միջոցները՝ պահանջված տեղեկություններն ստանալու համար նույնիսկ այն դեպքում, երբ այդ մյուս պետությունն իր հարկային նպատակների համար չունի այդպիսի տեղեկությունների անհրաժեշտություն: Նախորդ նախադասության մեջ նշված պարտավորությունը ենթակա է 3-րդ կետով նախատեսված սահմանափակումների, սակայն այդպիսի սահմանափակումները ոչ մի դեպքում չպետք է մեկնաբանվեն որպես Պայմանավորվող պետությանը թույլտվություն՝ մերժելու տեղեկությունների տրամադրումը միայն այն պատճառով, որ այդ տեղեկություններն իր համար ներպետական շահ չեն ներկայացնում:

5. 3-րդ կետի դրույթները ոչ մի դեպքում չպետք է մեկնաբանվեն որպես Պայմանավորվող պետությանը թույլտվություն՝ մերժելու տեղեկությունների տրամադրումը միայն այն պատճառով, որ տեղեկություններին տիրապետում են բանկը, այլ ֆինանսական հաստատություն, նշանակված անձը կամ գործակալությունում աշխատող անձը կամ խնամակալը, կամ որ դրանք վերաբերում է անձի սեփական շահերին:

Հոդված 26

Դիվանագիտական առաքելությունների եւ հյուպատոսական հաստատությունների անդամները

Սույն համաձայնագրի ոչ մի դրույթ չի սահմանափակում դիվանագիտական առաքելությունների կամ հյուպատոսական հաստատությունների անդամներին միջազգային իրավունքի ընդհանուր կանոնների կամ հատուկ համաձայնագրերի դրույթների շրջանակներում տրամադրված ֆինանսական արտոնությունները:

Հոդված 27

Արտոնության իրավունքը

Չհակասելով սույն համաձայնագրի մյուս դրույթներին՝ սույն համաձայնագրով նախատեսված արտոնությունը չի շնորհվում եկամտի տեսակի նկատմամբ, եթե,

հաշվի առնելով բոլոր համապատասխան փաստերն ու հանգամանքները, հիմքեր կան եզրակացնելու, որ այդ արտոնությունն ստանալն այդ արտոնությանն ուղղակիորեն կամ անուղղակիորեն հանգեցրած ցանկացած պայմանավորվածության կամ գործարքի գլխավոր նպատակներից մեկն էր, եթե չի հաստատվել, որ այդպիսի հանգամանքներում այդ արտոնությունը շնորհիլը համապատասխան կլիներ սույն համաձայնագրի համապատասխան դրույթների առարկային եւ նպատակներին:

Հոդված 28

Ուժի մեջ մտնելը

1. Պայմանավորվող պետությունները դիվանագիտական ուղիներով ծանուցում են միմյանց սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար իրենց ներպետական օրենսդրությամբ նախատեսված անհրաժեշտ ընթացակարգերի կատարման մասին:

2. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում 1-ին կետում նշված ծանուցումներից վերջինի ստացման օրը, եւ դրա դրույթները գործում են՝

ա) Սինգապուրում՝

i) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ դրանից հետո վճարվող, վճարված համարվող կամ վճարման ենթակա (որն ավելի շուտ է) գումարների նկատմամբ.

ii) գանձվող հարկերի առնչությամբ (աղբյուրի մոտ գանձվող հարկերից բացի)՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող երկրորդ օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող գնահատման յուրաքանչյուր տարվա համար եկամուտների նկատմամբ, եւ

iii) 25-րդ հոդվածի առնչությամբ (Տեղեկությունների փոխանակում)՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հարկման ժամկետների հետ կապված հարկերի մասով տեղեկությունների վերաբերյալ՝ ուժի մեջ մտնելու օրը կամ դրանից հետո ներկայացված պահանջների նկատմամբ, կամ եթե առկա չէ հարկման ժամկետ, ապա այն հարկերի բոլոր գանձումների նկատմամբ, որոնք առաջացել են համաձայնագիրն ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ դրանից հետո.

բ) Հայաստանում՝

i) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ համաձայնագիրն ուժի մեջ

մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի առաջին օրը կամ դրանից հետո ստացված եկամուտների նկատմամբ.

ii) եկամուտներից գանձվող այլ հարկերի առնչությամբ՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի առաջին օրը սկսվող հարկային տարում գանձվող հարկերի նկատմամբ, եւ

iii) 25-րդ հոդվածի առնչությամբ (Տեղեկությունների փոխանակում)՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հարկման ժամկետների հետ կապված հարկերի մասով տեղեկությունների վերաբերյալ՝ ուժի մեջ մտնելու օրը կամ դրանից հետո ներկայացված պահանջների նկատմամբ, կամ եթե առկա չէ հարկման ժամկետ, ապա այն հարկերի բոլոր գանձումների նկատմամբ, որոնք առաջացել են համաձայնագիրն ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ դրանից հետո:

Հոդված 29

Գործողության դադարեցումը

Սույն համաձայնագիրը մնում է ուժի մեջ մինչեւ Պայմանավորվող պետություններից մեկի կողմից դրա գործողության դադարեցումը: Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն համաձայնագրի գործողությունը՝ այն ուժի մեջ մտնելու օրվանից հինգ տարի ժամկետը լրանալուց հետո ցանկացած օրացուցային տարվա ավարտից առնվազն վեց ամիս առաջ դիվանագիտական ուղիներով դադարեցման մասին գրավոր ծանուցում ուղարկելով: Այդ դեպքում սույն համաձայնագրի գործողությունը դադարում է՝

ա) Սինգապուրում՝

i) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ այն օրացուցային տարվա ավարտից հետո վճարվող, վճարված համարվող կամ վճարման ենթակա (որն ավելի շուտ է) գումարների նկատմամբ, երբ ծանուցումն ուղարկվել է.

ii) գանձվող հարկերի առնչությամբ (աղբյուրի մոտ գանձվող հարկերից բացի)՝ այն օրացուցային տարվան հաջորդող երկրորդ օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող գնահատման յուրաքանչյուր տարվա համար եկամուտների նկատմամբ, երբ ծանուցումն ուղարկվել է. եւ

iii) մնացած բոլոր դեպքերում, ներառյալ 25-րդ հոդվածի (Տեղեկությունների

փոխանակում) դրույթների համաձայն ներկայացվող պահանջների նկատմամբ՝ այն օրացուցային տարվա ավարտից հետո, երբ ծանուցումն ուղարկվել է.

բ) Հայաստանում՝

i) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ այն օրացուցային տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի առաջին օրը կամ դրանից հետո ստացված եկամուտների նկատմամբ, երբ դադարեցման մասին ծանուցումն ուղարկվել է.

ii) եկամտի նկատմամբ այլ հարկերի առնչությամբ՝ այն օրացուցային տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի առաջին օրը կամ դրանից հետո սկսվող հարկային տարում գանձվող հարկերի նկատմամբ, երբ դադարեցման մասին ծանուցումն ուղարկվել է. եւ

iii) մնացած բոլոր դեպքերում, ներառյալ՝ 25-րդ հոդվածի (Տեղեկությունների փոխանակում) դրույթների համաձայն ներկայացվող պահանջների նկատմամբ՝ այն օրացուցային տարվա ավարտից հետո, երբ ծանուցումն ուղարկվել է:

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն համաձայնագիրը:

ԿԱՏԱՐՎԱԾ Է Սինգապուրում 2019 թվականի հուլիսի 8-ին, երկու բնօրինակով:

**Հայաստանի Հանրապետության
Կառավարության կողմից**

/ստորագրություն/

**Սինգապուրի Հանրապետության
Կառավարության կողմից**

/ստորագրություն/

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2019 թվականի հուլիսի 8-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Սինգապուրի Հանրապետության կառավարության միջև եկամուտների կրկնակի հարկումը բացառելու, և հարկումից խուսափելը ու շրջանցելը կանխելու վերաբերյալ» համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն**